## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Հունիսի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս Յոխեն Շմիդտին՝ Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտելու կապակցությամբ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ դեսպանատան եւ Մայր Աթոռի միջեւ հարաբերությունները մշտապես եղել են ջերմ եւ բարեկամական: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց Գերմանիայի դեսպանին Հայաստանում ակտիվ գործունեություն ծավալելու եւ երկու ժողովուրդների միջեւ կապերի ամրապնդմանը կարեւոր նպաստ բերելու համար:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաեւ Գերմանիայի հայկական համայնքին, նրա կրոնական եւ մշակութային կյանքին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Օրերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին՝ տիկնոջ Վերա Սեդրակյանի ուղեկցությամբ:

Ողջունելով ՀԲԸՄ նախագահի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Նորին Սրբությունը, ի դեմս տիար Պերճ Սեդրակյանի, իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց ՀԲԸՄ անդամներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ շարունակ ցուցաբերվող նվիրումի եւ աջակցության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Սփյուռքում եւ Հայրենիքում Միության ջանքերով իրականացվող ազգանպաստ գործունեությանը, ինչպես նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ համատեղ իրականացվող ծրագրերին:

Այս առիթով ՀԲԸՄ նախագահը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին մշտական զորակցության, մասնավորաբար ՀԲԸՄ հերթական՝ 87-րդ Ընդհանուր անդամական ժողովը հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի շենքում անցկացնելու հնարավորության համար:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաեւ ազգային-եկեղեցական կյանքում առ-